ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ծաղկաձոր

27/12/2023

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 17
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Հովիկ Գոգոյանը, Հմայակ Խաչատրյանը, Նարեկ Հարությունյանը, Յուրա Մանուկյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Ռիմա Մանուկյան, Նարինե Խաչատրյան, Սամվել Ալոյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ոսկան Եղիազարյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գարիկ Բաղալյանը

Լսեցին
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 4-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 17 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

1. Հաստատել Ծաղկաձոր համայնքի ավագանու 4-րդ նստաշրջանի 2023 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 17 հերթական նիստի օրակարգը՝
1) Հայաստանի Հանապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին.
2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 01-ի N 131,132,133 և 134 որոշումների մեջ լրացում կատարելու մասին.
3) Հայաստանի Հանապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Ծաղկաձոր

քաղաքի միջնակարգ դպրոցի պետական ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց, մշտական օգտագործման գույք տրամադրելու մասին.
4) Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 156/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղականինքնակառավարմանմասին» օրենքի 18-րդհոդվածի 1-ինմասի 5-րդկետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով և 33-րդ հոդվածի 3-րդ մասով՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2024 թվականի բյուջեն՝ համաձայն 1-6 հավելվածների, որից՝
եկամուտների գծով՝ 646776,7 հազարդրամ
ծախսերի գծով՝ 2 602776,7 հազարդրամ
դեֆիցիտը (պակասուրդը)՝ 1 956 000, 0 հազար դրամ1) համայնքի բյուջեի եկամուտները՝ հավելված 1,
2) համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝ հավելված 2,
3) համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ հավելված 3,
4) համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ հավելված 4,
5) համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ հավելված 5,
6) համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ հավելված 6:
2. Թույլատրել համայնքի ղեկավարին՝
1) համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարել վերաբաշխումներ ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,
2) սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 20 %-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնականհրապարակման օրվան հաջորդող օրվանից և տարածվում է 2024 թվականի հունվարի 01-ից ծագած հարաբերությունների վրա:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 157-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 01-Ի N 131,132,133 ԵՎ 134 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 01-ի << Ծաղկաձոր համայնքի << Ծաղկաձոր քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 131 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.

1) որոշման հղման <<Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով>> բառերից հետո լրացնել <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 29-ի N 1485-Ն որոշումը >> բառերը:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 01-ի << Ծաղկաձոր համայնքի << Արտավազ գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 132 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.

1) որոշման հղման <<Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով>> բառերից հետո լրացնել <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 29-ի N1485-Ն որոշումը >> բառերը:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 01-ի << Ծաղկաձոր համայնքի << Մեղրաձոր գյուղի Լևոն Գալստյանի անվան նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին. N 133 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.

1) որոշման հղման մեջ գրված <<Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով>> բառերից հետո լրացնել <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 29-ի N1485-Ն որոշումը >> բառերը:

4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 01-ի << Ծաղկաձոր համայնքի << Աղավնաձոր գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին. N 134 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.

1) որոշման հղման <<Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով>> բառերից հետո լրացնել <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 29-ի N1485-Ն որոշումը >> բառերը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 158/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ՄՇՏԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

1.Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անհատույց մշտական օգտագործման տրամադրել Հայաստանի Հանապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ծաղկաձոր քաղաքի միջնակարգ դպրոցի պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ հավելվածի:

2. Համայնքի ղեկավարի հետ կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 159/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 10-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն

որոշման 54-րդ և 60-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2023թվականի դեկտեմբերի 26-ի N 1/փ-483 եզրակացությունը և << ՍԱՏՈՒՆԱՎԱՆ>> սահմանափակ պահասխանատվությամբ ընկերության տնօրեն Վահագն Կամոյի Պետրոսյանի դիմումը

1.Հավանություն տալ՝ ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, Ծաղկաձոր քաղաքի վարչական տարածքում գտնվող << ՍԱՏՈՒՆԱՎԱՆ>> սահմանափակ պահասխանատվությամբ ընկերությանըսեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի ՀանրապետությանԿոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, Ծաղկաձոր քաղաքի Պահլավունյաց փողոցի 73 հասցեում գտնվող 3,929125 հա մակերեսով հողամսից՝ / կադաստրային ծածկագիր՝ 07-005-0016-0246/ 0,17 հա մարերեսով հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված նպատակային և գործառնական նշանակության հողամասը փոփոխել բնակավայրերի բնակելի կառուցապատման նպատակային և գործառնական նշանակության հողամասի:

2. Սույն ոշոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 160/

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԳՈՀԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՂԱՐԻԲՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՄԵԼՈՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ

ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Գարիկ Բաղալյանը